ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՁՈՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ ՅՈՒՐ ԾՆՆԴՅԱՆ 70-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Հայրապետին Հայոց՝ Վազգեն Առաջինին՝
Ի փառս ազգին մերոյ, հանուրց և ամենից,
Մաղթանքներս եմ հղում, որ քաջառողջ
լինի՝
Հավիտյա՜նս,
Հավիտյա՜նս
Հավիտենից։

Խաղաղության ոգով թող Աջն Իր
հայրական
Խունկ ու կնդրուկ բուրե Էջմիածնի բեմից,
Եվ տուն կանչե Հայոց հոտին թափառական՝
Հավիտյա՜նս,
Հավիտյա՜նս
Հավիտենից։

Թող լույս աշխարհ հորդեն նոր երազներ
բարի՝
Ծնված օրորոցում հնոց մեր մատենից,
Թող հիմն ամուր մնա սրբո Մայր տաճարի՝
Հավիտյա՜նս,
Հավիտյա՜նս
Հավիտենից։

Ցանկանում եմ նաև, որ Վեհամայրն անձայն
Ընդմիշտ օրհնի Որդուն իր լույս
շիրմասեմից,
Եվ Վեհափառ Որդին լո՜ւռ այցելի նրան՝
Հավիտյա՜նս,
Հավիտյա՜նս
Հավիտենից։

Երևան,
Մատենադարան,
2 հոկտ. 1978